Հավելված 1

Վարչության 2022թ. Սեպտեմբերի 15-ի թիվ 01/071-451 Լ որոշման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն իրավական ակտում նշված սակագները /այսուհետ նաև՝ Սակագներ/ գանձվում են ՀՀ դրամով՝ Բանկի կողմից ծառայությունը մատուցելու պահին՝ Բանկում առկա հաճախորդի հաշվից/ներից (հաշվի բացակայության դեպքում Բանկում բացվում է բանկային հաշիվ) անակցեպտ կարգով դեբետագրելու միջոցով, բացառությամբ այն սակագների, որոնց գանձումը նախատեսվում է կատարել ամսական կտրվածքով: Ամսական կտրվածքով սահմանված սակագների գանձումը կատարվում է տվյալ ամսվա 25-ից մինչև վերջին աշխատանքային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածում, եթե այլ բան նախատեսված չէ «Արդշինբանկ» ՓԲԸ Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ): Ընդ որում, ռեեստրի վարման ծառայության մատուցման առաջին և վերջին ամսվա միջնորդավճարները գանձվում են ամսվա փաստացի օրերի հաշվարկով, բացառությամբ, եթե ռեեստրի վարման պայմանգիրը հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով վերակնքման դեպքի: Նշված դեպքում ռեեստրի վարման ծառայության մատուցման ընթացիկ ամսվա համար գանձվում է միջնորդավճարի հաշվարկված մեծությունը՝ համաձայն Սակագների, ներառելով «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Կենտրոնական Դեպոզիտարիա) սակագինը ընթացիկ ամբողջ ամսվա համար:

1.2. Հաշվետիրոջ (այդ թվում անվանատիրոջ) հաշիվներում առկա արժեթղթերի պահպանման սակագինը չի հաշվարկվում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական Բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի նկատմամբ: Անվանատիրոջ մոտ նշված անձանց պատկանող արժեթղթերի առկայության դեպքում վերջինս Բանկի միջնորդությամբ դրանց մնացորդների մասին Սի-Բի-Էյ-Նեթ ցանցով տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրվա ավարտը:

1.3. Թողարկողները ռեեստրի վարման պայմանագրի կնքման օրը պարտավոր են ապահովել համապատասխան հատուկ հաշիվներին ծառայության մատուցման ընթացիկ ամսվա փաստացի օրերի համար միջնորդավճարի հաշվարկված մեծությունը համաձայն տվյալ պահին գործող սակագների:

1.4. Արժեթղթերի հաշվետերերը արժեթղթերի պահառության պայմանագրի կնքման օրը պարտավոր են ապահովել համապատասխան հատուկ հաշիվներին ծառայության մատուցման ընթացիկ ամսվա համար միջնորդավճարի հաշվարկված մեծությունը համաձայն տվյալ պահին գործող սակագների:

1.5. Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

1.6. Սակագներում թվարկված միջնորդավճարները ներառում են ԱԱՀ-ն:

1.7. Սահմանված ժամկետներում Սակագները չվճարվելու դեպքում դրանք անակցեպտ կարգով գանձվում են Բանկում հաճախորդի հաշիվներից: ՀՀ դրամով հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի համապատասխան գումարը կամ դրա մի մասը փոխարկել հաճախորդի արտարժույթով հաշիվներում առկա միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմաններով:

1.8. Թողարկողի կողմից սույն իրավական ակտով սահմանված ժամկետներում նախատեսված վճարները երեք ամիս անընդմեջ չկատարման, ուշացման կամ մասամբ կատարման դեպքում Բանկը տվյալ վճարման պարտավորությունը չկատարողի կամ ոչ պատշաճ կատարողի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ սկսած 4-րդ ամսից ուշացման յուրաքանչյուր ամսվա համար՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

1.9. Բանկն իրավունք ունի կասեցնել սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ ռեեստրի վարման և պահառության/ենթապահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին և հաշվետերերին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց երեք ամսից ավել վճարման ենթակա պարտավորություններ: Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Բանկն իրավունք ունի վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումն, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների հետ հետևյալ դեպքերում.

1.9.1 Սույն Սակագների բանաձև 1-ի համաձայն հաշվարկված ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը ($Գ_1$) ամբողջովին Կենտրոնական դեպոզիտարիային անմիջականորեն կամ Բանկի միջնորդությամբ վճարելուց հետո այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ:

1.9.2 սույն Սակագների բանաձև 2-ի համաձայն հաշվարկված ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը ($Գ_2$) Բանկին վճարելուց հետո այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է Բանկի կողմից:

1.9.3 սույն Սակագների բանաձև 3-ի համաձայն հաշվարկված ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը ($Գ_3$) Բանկին վճարելուց հետո այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է Բանկի կողմից:

1.9.4 1.9.1-1.9.3 ենթակետերով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման են ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը (ԺՊ), այնուհետ պայմանգրի վերսկսման վճարը (ՊՎՎ):

<u>Բանաձև 1</u>

$Գ_1$=ԺՊ+ՊՎՎ որտեղ
ԺՊ – կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,
Պվվ- պայմանագրի վերսկսման վճար, որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365
ՀԴ – հիմնական դրույքաչափ, որը կազմում է 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀդրամ,
Օ – կասեցման օրերի քանակ:

<u>Բանաձև 2</u>

$Գ_2$=ԺՊ+ՊՎՎ որտեղ
ԺՊ – կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,
Պվվ- պայմանագրի վերսկսման վճար, որը հաշվարկ վում է ՀԴ*Օ/365
ՀԴ – հիմնական դրույքաչափ, որը կազմում է 200 000 (երկու հարյուրհազար) ՀՀ դրամ,
Օ – կասեցման օրերի քանակ:

<u>Բանաձև 3</u>

$Գ_3$=ԺՊ+ՊՎՎ որտեղ
ԺՊ – կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,
Պվվ- պայմանագրի վերսկսման վճար, որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365
ՀԴ – հիմնական դրույքաչափ, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.009 %-ը,
Օ – կասեցման օրերի քանակ:

1.10. Ծառայությունների մատուցման սույն պայմանների 1.8 կետով նախատեսված կարգով կասեցման ժամանակահատվածում թողարկողի կամ հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում.

1.10.1 Թողարկողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել բանաձև 2- ի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է.

1.10.2 Հաշվետերը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել բանաձև 3- ի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է:

1.11. Սույն սակագների 2.2.5 և 2.2.6 կետերով սահմանված ծառայությունների համար Կենտրոնական Դեպոզիտարիայի և Բանկի կանոններով սահմանված դեպքերում տվյալ աշխատանքային օրվա ընթացքում արժեթղթերի փոխանցման նպատակով նոր ճշգրտված համապատասխան հանձնարարականների ներկայացման դեպքում լրացուցիչ գումար չի գանձվում: Ընդ որում, եթե տվյալ աշխատանքային օրվա ընթացքում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փաստացի փոխանցման գրառում չի կատարվում Համակարգում, ապա վճարված սակագնի գումարի 50%-ը հետ է վերադարձվում մինչև «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման համար նախատեսված օրվանը հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվա ավարտը:

1.12. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայություններից օգտվող Թողարկողները Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների մասին կարող են տեղեկանալ Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետ կայքից:

1.13. Բանկի իրավասու մարմնի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանող հաճախորդի(ների) համար կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ:

1.14. Բանկը կարող է գործող Սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:

1.15. Նշված սակագները տարածվում են միայն ռեզիդենտ Ֆիզիկական անձ հաճախորդների վրա, որոնք հանդիսանում են ՀՀ քաղաքացի և որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, իրավաբանական անձ հաճախորդների վրա, որոնց 50 տոկոս և ավել բաժնետերերը կամ փայատերերը չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի, կամ որոնց վերջնական շահառուների 50 տոկոսից ավելին չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի, ոչ ռեզիդենտ բոլոր այլ հաճախորդների համար սահմանվում են անհատական սակագներ:

1. Թողարկողին մատուցվող հիմնական և լրացուցիչ ծառայություններ			
	Ծառայության տեսակը	**Միավոր**	**Սակագինը** (*ներառյալ ԱԱՀ*)
1.1 Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային համակարգ			
1.1.1	Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային համակարգ	-	Անվճար
1.1.2	Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային համակարգ	-	Անվճար
1.1.3	Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, փայերի[1] հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)[2]	6 000 ՀՀ դրամ (1-9-ը տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ)
			8 000ՀՀ դրամ/10-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների

[1] Բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի

*եթե արժեթղթի շուկայական արժեքը մեծ է արժեթղթի անվանական արժեքից,ապա սակագինը հաշվարկելիս հաշվի է առնվում արժեթղթի շուկայան արժեքը:

[2]Արժեթղթերի յուրաքանչյուր դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

	ռեեստրի վարում և պահպանում)		քանակ
			10 000ՀՀ դրամ/50-ից մինչև 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			20 000ՀՀ դրամ/100-ից մինչև 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			30 000ՀՀ դրամ/200-ից մինչև 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			40 000ՀՀ դրամ/500-ից մինչև 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			50 000ՀՀ դրամ/1000 և ավել տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
1.2 Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)[3]			
1.2.1	Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք (ամսական)	0.003%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ առավելագույնը 50 000 ՀՀ դրամ
1.3 Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում			
1.3.1	Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար/մեկ փոխանցում	6 000 ՀՀ դրամ
1.4 Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ[4]			
Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)			
1.4.1	Տեղաբաշխված Բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի)ընդհանուր անվանական արժեք (փայերի դեպքումփայերի շուկայական արժեքը)	0.1%, նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույ նը 2 500 000 ՀՀ դրամ
Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում(պարտատոմսերի տեղաբաշխում բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)			

[3]Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով ամսվա վերջին օրվա համար ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի հաշվարկով:

[4] Բացառություն են կազմում կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով

1.4.2	Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.0075% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույ նը 2 250 000 ՀՀ դրամ
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում			
1.4.3	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.075% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույնը 1 000 000 ՀՀ դրամ
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում			
1.4.4	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.0075% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույնը 400 000 ՀՀ դրամ
Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում[5]			
1.4.5	Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.075% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ
1.4.6	Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	հաշիվ	Անվճար
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում			
1.4.7	Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում[6]	ցուցակ	2 000 ՀՀ դրամ
1.4.8	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն տարբերակ		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի/առանց հիմքերի/ տրամադրում			
1.4.9	Թղթային/Էլեկտրոնային	Մեկ տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
1.4.10	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն տարբերակ		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տրամադրում (հիմքերով)[7]			
1.4.11	Թղթային	Մեկ տեղեկանք	30 000 ՀՀ դրամ
1.4.12	Էլեկտրոնային		20 000 ՀՀ դրամ
1.4.13	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը

[5] Ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում փոխարկման դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող, արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը):

[6] Այն դեպքերում, երբ Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը տրամադրվում է Բանկի որևէ ստորաբաժանում ներկայացնելու համար, Բանկի կողմից տրամադրվում է անվճար:

[7] Սակագինը գանձվում է նաև այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ:

	տարբերակ		
Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով)[8]			
1.4.14	Թղթային	Մեկ տեղեկանք	30 000 ՀՀ դրամ
1.4.15	Էլեկտրոնային		20 000 ՀՀ դրամ
1.4.16	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն տարբերակ		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը
Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում[9]			
1.4.17	Տվյալների փոփոխության մուտքագրում համակարգ	-	Անվճար
Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում			
1.4.18	Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար (յուրաքանչյուր գործընթացի համար)	0,2%, նվազագույնը 30 000 ՀՀ դրամ
Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում			
1.4.19	Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը/յուրաքանչյուր գործընթացի համար	0,02%, նվազագույնը 30 000 ՀՀ դրամ
Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի)գործառնությունների մասին(արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմաբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)			
1.4.20	Ծանուցում	տարեկան	225 000 ՀՀ դրամ
Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում			
1.4.21	Հսկողության իրականացում	տարեկան	750 000 ՀՀ դրամ
2. Հաշվետերերին մատուցվող հիմնական և լրացուցիչ ծառայություններ			
	Ծառայության տեսակը	**Միավոր**	**Սակագինը** (*ներառյալ ԱԱՀ*)
2.1 Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում և փակում			
2.1.1	Արժեթղթերի հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
2.1.2	Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար

[8] Սակագինը գանձվում է նաև այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ:

[9] Թողարկողի մասին տվյալների փոփոխությունը ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխության (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը) գրանցում Համակարգում:

2.1.3*	Հաշվում առկա արժեթղթերի պահպանում *(բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի)*[10]	Յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.0007% նվազագույնը 1000 ՀՀ դրամ
2.1.4	Արժեթղթերի հաշվի փակում	-	Անվճար
2.1.5	ՀՀ պետական պարտատոմսերի հաշվի սպասարկում (միայն ՀՀ պետական պարտատոմսեր հաշվառելու դեպքում)	Արժեթղթերի հաշիվ (տարեկան)	3000 ՀՀ դրամ / 5000 ՀՀ դրամ
**Սակագների 2.1.3 կետը չի տարածվում ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի)*			
2.2 ՀՀ կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ՝ վերջնահաշվարկի վայր՝ Կենտրոնական դեպոզիտարիա *(փոխանցման սակագինը չի գանձվում այն դեպքերում, երբ արժեթղթեր փոխանցող/ստացող կողմ է հանդիսանում ՀՀ Կենտրոնական Բանկը)*			
Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ «Ազատ առաքում՝ հաձայնությամբ» (վճարում է փոխանցող կողմը կամ շահագրգիռ կողմը)[11]			
2.2.1	Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում, (ներառյալ ազատ առաքումը համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.1% նվազագույնը 5 000 ՀՀ դրամ առավելագույնը 2 500 000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ «Ազատ առաքում՝ հաձայնությամբ» սկզբունքով (վճարում է փոխանցող կողմը կամ շահագրգիռ կողմը)[12]			
2.2.2	Պարտատոմսերի փոխանցում (ներառյալ ազատ առաքում համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.01% նվազագույնը 5 000 ՀՀ դրամ առավելագույնը 400 000 ՀՀ դրամ
Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին			
2.2.3	Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր (վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը)	8 000 ՀՀ դրամ
Պորտֆելի փոխանցում մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցում			
2.2.4	Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր (վճարումը իրականացնում է փոխանցող կողմը)	6 000 ՀՀ դրամ

[10] Այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է Բանկի Կողմից հաշվետիրոջ հաշվի վերաբացման կամ բացման պահից և հաշվարկվում է մինչև տվյալ հաշվի փակման օրը ներառյալ:

[11] Ներառում է բաժնետոմսերով առքուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա, (երբ տվյալ վճռով պարտապանը Կենտրոնական դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

[12] Ներառում է պարտատոմսերով առքուվաճառքի, նվիրատվության, ժառանգության,դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Կենտրոնական դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

Բաժնետոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով կամ Fop փոխանցում ազատ առաքում համաձայնությամբ սկզբունքով (վերջնահաշվարկի վայրը՝ ՀՀ)			
2.2.5	Բաժնետոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը)	0.15% նվազագույնը 10 000 ՀՀ դրամ առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով			
2.2.6	Պարտատոմսերի DVP /FOP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը)	0.015% նվազագույնը 5 000 ՀՀ դրամ առավելագույնը 300 000 ՀՀ դրամ
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում			
2.2.7	Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականցնում է գրավառուն)	0.4% նվազագույնը 20 000 ՀՀ դրամ առավելագույնը 600 000 ՀՀ դրամ
Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ արժեթղթերի հաշվում արժեթղթերի գրավադրում			
2.2.8	Բաժնետոմսերի գրավադրում	Գրավի առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականացնում է գրավատուն)	0.06% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
2.2.9	Պարտատոմսերի գրավադրում		0.01% նվազագույնը 1,000 ՀՀ դրամ
Հաշետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում			
2.2.10	Սառեցում	Սառեցված արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է հաշվետերը	0.05% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում			
2.2.11	Առևտրային արգելադրում	-	Անվճար
Բաժներիտական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար			
2.2.12	Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0.4% նվազագույնը 10 000 ՀՀ դրամ
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում			
2.2.13	Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	Անվճար
Հաշետիրոջ հարցման հիման վրա Բանկի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմք հանդիսացող ստաթղթերի)			
2.2.14	Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում (այդ թվում ըստ յուրաքանչյուր դասի	քաղվածք	1 000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր դասի համար

	(ռեեստրից քաղվածք))		
2.2.15	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն տարբերակ		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը
2.2.16	Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
2.2.17	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն տարբերակ		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը
Հաշետիրոջ հարցման հիման վրա Բանկի մոտ բացված (վերաբացված) արժոթերի հաշվից այլ տեղկությունների (բացառությամբ գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների) վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (հիմքերով)			
2.2.18	Էլեկտրոնային եղանակով	տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
2.2.19	Թղթային եղանակով		15 000 ՀՀ դրամ
2.2.20	Տվյալ տեղեկատվության ռուսերեն կամ անգլերեն տարբերակ		Հայերենի համար սահմանված գնի կրկնապատիկը
Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուին միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում			
2.2.21	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	300 000 ՀՀ դրամ
2.2.22	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
2.2.23	Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված արժեթղթերի, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ ԿԲ սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք (ամսական)	0.00%
Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուին միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում			
2.2.24	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	50 000 ՀՀ դրամ
2.2.25	Անվանատիրոջ հաշվում ներառված	Արժեթղթերի հաշիվ	Անվճար

	տեղեկությունների փոփոխության գրանցում		
2.2.26	Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված արժեթղթերի, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ ԿԲ սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք (ամսական)	0.00%
2.3 Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայություններ. (ծառայությունների շրջանակը կարող է տարբերվել կախված օտարերկրյա պահառուից)[13]			
Արժեթղթերի պահպանման ծառայություն			
2.3.1	Արժեթղթերի պահպանում	Հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր արժեք/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)[14]	0.0625% (1-ին խմբի երկրների համար)
			0.1250% (2-րդ խմբի երկրների համար)
			0.3125% (3-րդ խմբի երկրների համար)
			0.5625% (4-րդ խմբի երկրների համար)
			պահառուի սակագին + 25 % հավելագին (այլ երկրների համար)
Խումբ 1			
Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Գերմանիա, Ավստրիա, Միջազգային պարտատոմսեր (Eurobonds), Օտարերկրյա ֆոնդեր			
Խումբ 2			
Լյուքսեմբուրգ, Հարավային Աֆրիկա, Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Շվեյցարիա, Կանադա, Իռլանդիա, Բելգիա, Դանիա, Շվեդիա, Ճապոնիա, Ֆինլանդիա, Պորտուգալիա, Նորվեգիա, Ավստրալիա			
Խումբ 3			
Իսպանիա, Ֆիլիպիններ, Սինգապուր, Հոնգ Կոնգ, Ինդոնեզիա, Հունգարիա, Ռուսաստան, Հարավային Կորեա, Թաիլանդ, Մալայզիա, Ուկրաինա, Չինաստան			
Խումբ 4			
Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Ռումինիա, Բուլղարիա, Սլովենիա, Իսրայել, Թուրքիա, Մակեդոնիա, Խորվաթիա, Ալբանիա, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Բրազիլիա, Եգիպտոս, Հնդկաստան, Ղազախստան, Մոնտենեգրո, Սերբիա			
Կորպորատիվ գործողություններ			

[13] Սակագները նշված են եվրոյով, քանի որ դրանցով սահմանված ծառայությունները մատուցվում են օտարերկրյա պահառուի միջոցով: Ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ծառայության մատուցման օրվա համար ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից եվրոյի նկատմամբ հրապարակված ՀՀ դրամի արժութային շուկաներում ձևավորված միջին հաշվարկային փոխարժեքով արտահայտված գումարով:

[14] Պահպանման սակագնի հաշվարկի հիմք է վերցվում արժեթղթերի շուկայական արժեքը, եթե այն ավելի փոքր չէ անվանական արժեքից: Հակառակ դեպքում հիմք է վերցվում անվանական արժեքը

2.3.2	Արժեթղթերից ստացվող եկամուտների մուտքագրում հաշվին	Ըստ յուրաքանչյուր գործառնության	0.9 %, նվազագույնը՝ 5.5 EUR
2.3.3	Արժեթղթերի մարում		0.9 %, նվազագույնը՝ 14 EUR
2.3.4	Շահութաբաժինների վճարում		0.9 %, նվազագույնը՝ 14 EUR
2.3.5	Այլ պարտադիր գործողություններ		0.9 %, նվազագույնը՝ 41 EUR
2.3.6	Ոչ պարտադիր գործողություններ		0.9 %, նվազագույնը՝ 62 EUR
2.3.7	Ռայթերի առք և վաճառք	Գործարքի առարկա արժեթղթերի ծավալ	0.9 %, նվազագույնը՝ 41.5 EUR
2.3.8	Հարկերի պահում, հարկային հավատագրերի մշակում, հարկերի վերադարձման, ճշգրտման գործողություններ	Ըստ յուրաքանչյուր դեպքի	94 EUR + երրորդ կողմի ծախսեր
2.3.9	Ժողովների հեռակա մասնակցության ապահովում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Պահառուի սակագին + 25% հավելագին
Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ (վերջնահաշվարկի վայրը՝ ՀՀ-ից դուրս)			
2.3.10	Արժեթղթերի փոխանցում / վերջնահաշվարկի կատարում (FOP, DVP)	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	37.5 EUR (Ա խմբի երկրների համար) 87.5 EUR (Բ խմբի երկրների համար) 162.5 EUR (Գ խմբի երկրների համար)
2.3.11	Սխալ/թերի լրացված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում		78.2 EUR
2.3.12	Արժեթղթերի և/կամ դրամական միջոցների փոխանցման/ստացման հանձնարարականների չեղարկում	Ըստ յուրաքանչյուր գործարքի	25 EUR
Խումբ Ա			
Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Գերմանիա, Լյուքսեմբուրգ, Մալթա			
Խումբ Բ			
Հարավային, Աֆրիկա, Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Մեծ, Բրիտանիա, Իտալիա, Շվեյցարիա, Կանադա, Իռլանդիա, Բելգիա, Դանիա, Շվեդիա, Ճապոնիա, Ֆինլանդիա, Պորտուգալիա, Նորվեգիա, Ավստրալիա, Նոր, Զելանդիա, Չեխիայի, Հանրապետություն, Իսպանիա, Հունգարիա, Սլովակիա, Հունաստան, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Ռումինիա, Բուլղարիա, Սլովենիա, Խորվաթիա, Ավստրիա, Արգենտինա, Մեքսիկա, միջազգային արժեթղթեր (Eurobonds)			
Խումբ Գ			
Լեհաստան, Ֆիլիպիններ, Սինգապուր, Հոնգ, կոնգ, Ինդոնեզիա, Հարավային, Կորեա, Թաիլանդ, Մալայզիա, Ուկրաինա, Իսրայել, Թուրքիա, Մակեդոնիա, Բոսնիա, և, Հերցեգովինա, Բրազիլիա, Եգիպտոս, Հնդկաստան, Մոնտենեգրո, Սերբիա, Ռուսաստան, Կիպրոս, Չինաստան			

Դրամական միջոցներով վերջնահաշարկի կատարման ծառայություններ (Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)			
2.3.13	Դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման հանձնարարականի կատարում (ներառյալ preadvice հանձնարարականները)	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	15.6 EUR
2.3.14	Դրամական միջոցներով գործառնություններ առանց հանձնարարականի		5.5 EUR
2.3.15	Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում		78.2 EUR
Օտարերկրյա պահառուից ստացված հաշվետվությունների/տեղեկանքների տրամադրում			
2.3.16	Կորպորատիվ գործողությունների ծանուցման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության/տեղեկանքի	1 EUR
2.3.17	Կորպորատիվ գործողությունների հաստատման տեղեկանք		
2.3.18	Ամսական ստացվելիք տոկոսագումարների տեղեկանք		
2.3.19	Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք		
2.3.20	Սպասվող գործառնությունների տեղեկանք		
2.3.21	Հաշվում առկա արժեթղթերի վերաբերյալ հաշվետվություն		
2.3.22	Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ հաշվետվություն		
2.3.23	Դրամական միջոցների վերաբերյալ այլ հաշվետվություններ		
2.3.24	Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք		7 EUR
2.3.25	Սպասվող գործառնությունների տեղեկանք		
2.3.26	Վերջնահաշվարկի հաստատման հաշվետվություն		1 EUR

2.3.27	Վերջնահաշվարկի հանձնարարականի կարգավիճակի հաշվետվություն		
2.3.28	Վերջնահաշվարկի առկախված հանձնարարականի հաշվետվություն		
2.3.29	Գործարքի մյուս կողմի հանձնարարականի ծանուցում		
2.3.30	Հաշվից ելքագրման կամ հաշվին մուտքագրման հաստատման տեղեկանք		
2.3.31	Կորպորատիվ գործողությունների ընդհանրական հաշվետվություն		40 EUR
2.3.32	Հաշվում առկա արժեթղթերի բացվածքի տրամադրում ըստ շուկաների		
2.3.33	ԱՄՆ եկամուտների աղբյուրից պահվող հարկերի մասին հաշվետվություն		